ԽՈՍՔ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին բոլոր դարաշրջաններում բացառիկ ազդեցություն է ունեցել հայ ժողովրդի պատմական ընթացքի եւ պետականության կայացման վրա։ Պետությունն ու Եկեղեցին պատմականորեն հանդես են եկել որպես մեկ միասնություն, եւ այդ փոխկապակցվածությունն իր կնիքն է դրել ազգային ինքնության եւ հոգեբանության վրա, դարձել ինքնագիտակցության կարեւոր բաղադրիչ։ Պատմական որոշ փուլերում, երբ հայ ժողովուրդը կորցրել է պետականությունը, Եկեղեցին իր վրա է վերցրել մի շարք գործառույթներ՝ առաջնորդվելով ազգապահպանության վեհ գաղափարով։ Եւ Եկեղեցու ջանքերը միշտ պսակվել են հաջողությամբ՝ առաջին հերթին հայրենանվեր եւ ազգասեր հայրապետների շնորհիվ։

Այսօր իրեն ժառանգված ազգային բարձրագույն արժեքների կրողն ու փոխանցողն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդն է։ Նա անվարան առաջ է ընթանում այն ճանապարհով, որով անցել են երջանկահիշատակ իր նախորդները։ Միեւնույն ժամանակ հայ ժողովրդի պատմության համապատկերում նա գծում է իր սեփական ուղին՝ իր ուրույն հետքը պատմության հոլովույթում եւ ազգային ինքնագիտակցության կերտման գործընթացում։ «Մենք Քրիստոսի ժողովուրդ ենք, մեր հավատը, որ Քրիստոս հարություն է առել, անհուսությունը փոխում է հույսի, տկարությունը՝ ուժի, անտարբերությունը՝ նախանձախնդրության, արծաթասիրությունը՝ բարեգործության, ծառայությանն ու աշխատանքին միախառնում է նվիրումի ու հանձնառության ոգին։ Այս փոխակերպությանն ենք կոչված, որով միայն կարող ենք անկորուստ պահել մեր երկիրն ու ազգային կյանքը եւ հաղթանակներ արձանագրել մեր ժողովրդի ու հայրենիքի բարօրության եւ առաջընթացի պայքարում»,— ասված է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի խոսքում։

Յուրաքանչյուր միտք պահանջում է անմնացորդ նվիրում, կամք, ապագայի նկատմամբ հավատք, որ գաղափարից վերածվի գործի։ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ եւ օրհնությամբ իրագործված

բոլոր նախաձեռնություններում այս բոլոր բնութագրիչներն առկա են։ Յուրաքանչյուրում արտացոլված է Վեհափառ Հայրապետի հետեւողական վերաբերմունքը, որը բխում է սեփական պետության եւ ժողովրդի նկատմամբ տածած անսակարկ եւ անսահման սիրուց եւ նվիրումից։ Ամեն ինչ հայոց պետականության ամրապնդման, հայ ժողովրդի ապահով ու հուսալի ապագայի համար. ահա այն կարեւոր համոզմունքը, որով առաջնորդվում է Վեհափառ Հայրապետը յուրաքանչյուր օր։

Վեհափառ Հայրապետի տեսադաշտում են այն բոլոր բնագավառները, որոնք առնչվում են Հայ Առաքելական Եկեղեցուն։ Բարեփոխումներից մինչեւ նոր ծրագրերի իրականացում, վերանորոգումից մինչեւ կառուցում, պահպանումից մինչեւ ստեղծում եւ հանրահռչակում. սա է Վեհափառ Հայրապետի ամենօրյա պրպտումների բովանդակությունը։ «Միշտ հիշենք՝ միայն համախմբվածությամբ է հնարավոր իրագործել հզոր հայրենիքի մեր տեսիլքը, միայն օրինահարգությամբ, արդարասիրությամբ, ծառայանվիրումով, հանձնառություններով ու զոհողություններով կարող ենք ծաղկեցնել մեր կյանքը եւ ամուր ու հաստատուն պահել մեր պետականությունը»,— պատգամում է Վեհափառ Հայրապետը։

Այս տարի լրանում է Վեհափառ Հայրապետի ծննդյան 70-ամյակը։ Շնորհավորում ենք Հայ Առաքելական Եկեղեցու առաջնորդի օրհնաբեր ծնունդը, մաղթում երկար տարիների քաջառողջ կյանք, ՇԻՆԱՐԱՐ եւ ՄԵԾԱԳՈՐԾ գաղափարներ ու իրականացումներ։

Տ. ԱՐԱՐԱՏ ՔՀՆ. ՊՈՂՈՍՅԱՆ
Ս. Էջմիածնի մատենադարանի եւ հրատարակչության տնօրեն